Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/3317/02/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«02» ապրիլի 2026թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ. Հարությունյանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր կամ Ընկերություն) ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող), ինքնուրույն պահանջ չներկայացնող 3-րդ անձ՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 07.04.2025թ. կնքված թիվ «ՓՊՄԱՇՁԲ-25-10/1-1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծելու մասին 20.03.2026թ. ծանուցումը (որոշումը) անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

(I) 25.03.2026 թվականին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան է մուտքագրվել «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումը ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, ինքնուրույն պահանջ չներկայացնող 3-րդ անձ՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 07.04.2025թ. կնքված թիվ «ՓՊՄԱՇՁԲ-25-10/1-1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծելու մասին 20.03.2026թ. ծանուցումը (որոշումը) անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը նույն օրը մակագրվել է դատավոր Մ. Հարությունյանին:

31.03.2026 թվականին կազմվել է արձանագրություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1.1-րդ մասի հիման վրա «ԲԻԴԵՔ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է եռօրյա ժամկետ՝ հայցադիմումում առկա թերությունները վերացնելու նպատակով:

01.04.2026 թվականին և 02.04.2026 թվականին դատավոր Մ. Հարությունյանին է տրամադրվել գործին մասնակցող անձանց թվին համապատասխան թիվ ԵԴ2/3317/02/26 քաղաքացիական գործով հայցադիմումի օրինակները և դրան կից փաստաթղթերի պատճենները:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանն արձանագրում է, որ դրանք ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 121-րդ և 122-րդ հոդվածներով սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը, ինչպիսի պայմաններում հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

(II) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հայցադիմումը ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջել «ՓՊՄԱՇՁԲ-25-10/1-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

(III) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործն պետք է քննել գրավոր ընթացակարգով, քանի որ կողմերի հետ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի քննության անհրաժեշտությունը տվյալ փուլում բացակայում է:

(IV) Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, ինքնուրույն պահանջ չներկայացնող 3-րդ անձ՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 07.04.2025թ. կնքված թիվ «ՓՊՄԱՇՁԲ-25-10/1-1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծելու մասին 20.03.2026թ. ծանուցումը (որոշումը) անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2026 թվականի մայիսի 18-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջել «ՓՊՄԱՇՁԲ-25-10/1-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ ***հնգօրյա ժամկետում:***

4. Որոշումն օրենքով սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց:

5. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**